Doi:10.54503/0135-0536-2022.2-270

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (XX–XXI դդ.)*

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բանալի բառեր՝ քաղաքական մշակույթ, Բյուզանդական կայսրություն, Ռուսական կայսրություն, իրավաքաղաքական միտք, լեգիտիմություն, սահմանադրականություն, իրավադիտակցություն, պետականություն, Երրորդ Հանրապետություն:

Նախաբան

«Քաղաքական մշակույթը» «քաղաքական համակարգի մասնակիցների անհատական դիրքորոշումների միագումարն է: Դա սուբյեկտիվ ոլորտ է, որը կազմում է քաղաքական գործողությունների հիմքը»[1]*: Հետագա շարադրանքի տեսանկյունից կարևոր է հասկանալ, թե ի՞նչ տարրերից է բաղկացած այդ երևույթը. «Քաղաքական մշակույթը ներառում է քաղաքական փորձը, կարծրատիպերը, քաղաքական միֆերը, անհատների կամ խմբերի քաղաքական վարքը, ինչպես նաև՝ քաղաքական ինստիտուտների գործունեության մոդելները, գաղափարախոսությունը, քաղաքական խորհրդանիշները, քաղաքական սոցիալիզացիան»*[2]*:*

Այս բանաձևից պարզ է՝ խոսքն այնպիսի մի համակարգի մասին է, որն առաջանում է անհատների՝ քաղաքական զանազան դրսևորումների հանդեպ վերաբերմունքից: Ե՞րբ է անհատը մտնում նման փոխհարաբերությունների մեջ: Ենթադրելի է, որ դա տեղի է ունենում միշտ և ամենուր, բայց առավել ցայտուն ու գիտական վերլուծության համար առավել ակնառու է դառնում այն պարագայում, երբ անհատը հանդես է գալիս որպես հպատակ կամ քաղաքացի, իսկ քաղաքական ոլորտին առնչվող բոլոր վերը նշված տարրերը տեղավորվում են պետական կառուցվածքի շրջանակներում: Այս իմաստով առավել հիմնավորված կարող ենք խոսել Հայաստանի քաղաքական մշակույթի մասին՝ նկատի ունենալով Առաջին, Երկրորդ (ոչ անկախ) և Երրորդ հանրապետությունները:

Սակայն մինչև 1918 թ. մեր ժողովուրդն անցել է հազարամյակների ճանապարհ, մի քանի անգամ ստեղծել է իր պետականությունը (ինքնիշխանության տարբեր աստիճաններով) ու ապրել է այլ պետությունների և, մասնավորապես, կայսրությունների պայմաններում: Բնական է ենթադրել, որ երեք հանրապետությունների և, այդ թվում՝ Երրորդ հանրապետության քաղաքական

* *Ներկայացվել է 06. IV. 2022 թ., գրախոսվել է 11. IV. 2022 թ., ընդունվել է տպագրության 02. VI. 2022 թ.:*

[1] Политология. 2005, 366.

[2] Политология. 2005, 367–369.

մշակույթի, հատկապես՝ վերը հիշատակած տարրերի՝ կարծրատիպերի, քաղաքական միֆերի, անձերի, խմբերի, ինստիտուտների քաղաքական վարքի վրա իրենց ազդեցությունը թողել են նախորդ դարերի տնտեսական, քաղաքական և հոգևոր ոլորտները: Խնդիրն ավելի նեղ դարձնելու համար անդրադառնանք ժամանակագրորեն «վերջին» երեք կայսրությունների՝ Օսմանյան կայսրության, Պարսկաստանի, Ռուսական կայսրության և Խորհրդային Միության թողած ազդեցությանը: XX–XXI դդ. հայկական պետության պայմաններում ապրող հայերն այս կամ այն չափով այդ կայսրությունների մշակույթների կրողներն են. կարելի է ասել, որ որոշ իմաստով նաև դրանց հիման վրա են կառուցել հայկական պետության մեջ քաղաքական մշակույթի սեփական դրսևորումները:

Հայաստանի Երրորդ Հանրապետության քաղաքական մշակույթի վրա այդ կայսրությունների ազդեցությունը որոշելու համար, կարծում ենք, պետք է պատասխանել հետևյալ հարցերին. 1) ինչպե՞ս էր այդ կայսրություններում «լեգիտիմացվում» իշխանությունը, 2) ի՞նչ նշանակություն ունեին այդ կայսրություններում ձևականորեն ամրագրված օրենքները, 3) ինչպե՞ս էր այդ պարագայում ձևավորվում հայազգի տնտեսական և մտավորական վերնախավը:

Իշխանության լեգիտիմացում

Ամենամեծ ազդեցությունն այսօրվա Հայաստանի քաղաքական մշակույթի վրա թողել են Ռուսական կայսրությունն ու Խորհրդային Միությունը՝ այն պարզ պատճառով, որ 1990 թ. օգոստոսի 23-ին անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբ ենք հռչակել այդ կայսրության նախկին տարածքում: Բայց, հավանաբար, իմաստ ունի հակիրճ անդրադառնալ նաև Բյուզանդական կայսրությանը՝ երկու պատճառով: Նախ՝ Բյուզանդիայի կազմում էր Հայաստանի մի մասը 387 թ. մինչև 636 թվականը: Երկրորդ պատճառը միջնորդավորված կապն է. Ռուսաստանը շատ հարցերում փոխառել էր Բյուզանդիայի պետական կառավարման մոդելը, ուղղափառ կրոնը և ավելի լայն իմաստով՝ պետություն կառուցելու գաղափարախոսությունը: Հատկապես XXI դարում ռուս հեղինակների մի մասը դրա մասին գրում է հպարտությամբ. «Կոստանդնուպոլսի երկրորդ անկումից հետո, այս անգամ՝ օսմանների ձեռքից, Բյուզանդիայի իրավահաջորդը դարձավ ոչ թե Նիկեան, այլ Մոսկովյան Ռուսիան: Եվ չնայած մեր բոլոր դժվարություններին և պատմական շրջադարձերին՝ մենք կրում ենք բյուզանդական առաքելությունն առ այսօր: Մենք՝ ռուսներս, Երրորդ Հռոմի էքսկուբիտորներն (առաջամարտիկները – Ա. Ա.) ենք»[3]: Պետք է ասել, որ պատմության տարբեր ժամանակներում «Երրորդ Հռոմի», այսինքն՝ Բյուզանդիայի իրավահաջորդը լինելու հավակնություններ են ունեցել նաև այլ երկրներ (Բուլղարիան, Սերբիան, Հունաստանը), սակայն հայերի համար, վերը նշված պատճառով, առավել կարևոր են օսմանյան և ռուսաստանյան ծրագրերը:

Քաղաքական մշակույթի կարևորագույն տարրի՝ քաղաքացի (հպատակ)–իշխանություն փոխհարաբերությունների տեսանկյունից առավել կարևոր է այն հանգամանքը, որ Բյուզանդիայի կայսրը կամ ռուսական ցարը որևէ

[3] Д у г и н. Торжество Византии.– https://izborsk-club.ru/9908.

անձի կամ ինստիտուտի կողմից «լեգիտիմացման» կարիք, ըստ էության, չուներ՝ անկախ նրանից, թե ինչ արարողակարգով էր ստանձնում իր պարտականությունները: Նա «ինքնին» արդեն Աստծո օծյալ էր: Այդ մոտեցումը տարբերվում էր Արևմտյան Եվրոպայից (լատինական աշխարհից), որտեղ Հռոմի պապի («լեգիտիմացնելու» իրավունք ունեցողի) ու կայսրերի, թագավորների միջև հարաբերությունները լատենտ կամ բացահայտ կոնֆլիկտի ներուժ էին պարունակում, և հաճախ այդ հարաբերությունները վերածվում էին արյունալի բախումների: Դրա մասնավոր հետևանքներից մեկն այն էր, որ Բյուզանդական կայսրությունում չէր ծագում «ինվեստիտուրայի», այսինքն՝ պաշտոնյաների (առաջին հերթին՝ եպիսկոպոսների) նշանակման խնդիրը. պետական պաշտոնները կայսրությունում վարում էին «քաղաքացիական» ոչ հոգևորական անձինք: Այդ առանձնահատկությունների զգալի մասը պահպանվել էր նաև Օսմանյան կայսրությունում:

Պետական կարգավորումների այդ տեսակը, որը բյուզանդացի մտածողները կոչում էին «իշխանությունների սիմֆոնիա»[4], իր խորը հետքն է թողել նաև Ռուսաստանի քաղաքական մշակույթի վրա: Իհարկե, սխալ կլիներ նույնականացնել բյուզանդական և ռուսաստանյան իրավաքաղաքական մոդելները՝ մանավանդ, որ երկուսն էլ պատմական երկար զարգացում են ապրել: Բայց այս հոդվածի համատեքստում հիշատակման է արժանի այդ մոդելները բնութագրող հատուկ վերաբերմունքը երկրի առաջին դեմքին: Նա մարմնավորում է ազգի միասնականությունը և, ըստ էության, ընկալվում է որպես ժողովրդի (կամ կայսրության դեպքում՝ ժողովուրդների) հայր: Այդ պարագայում միանգամայն օրգանական է «царь-батюшка» *հասկացությունը, առաջնորդի սակրալիզացիան (սրբադասումը), հակվածությունն ավտորիտարիզմին, «ուժեղ ձեռքի» պահանջարկը: Այդ խնդրին նվիրված ծավալուն հետազոտության մեջ ռուսաստանցի քաղաքագետ Արտյոմ Զեմցովը ցույց է տալիս, որ «ուժեղ ձեռք» հասկացության հիմնական սուբյեկտիվ իմաստներն են, ըստ հարցման մասնակիցների, «ամբողջականությունը», «կարգուկանոնը», «կարծրությունը», «այլընտրանքի բացակայությունը», «հակավերնախավային» բնույթը[5]: Հատկապես կարևոր է այդ շարքի վերջին բնութագրիչը՝ «հակաէլիտիզմը». այդ մշակույթում առաջնորդը վեր է որևէ համակարգից կամ անգամ օրենքից՝ նա իր երկաթյա բռունցքով «տեղն է դնում» անպիտան պաշտոնյաներին, խորհրդարանը, կուսակցություններին, հասարակական շարժումները:*

Դա դարերի ընթացքում պահպանվող և մշակույթ ձևավորող ավանդույթ է. ցարը կամ կայսրը կարող է պատժել իր «վասալներին» և վերջիններիս կամայականություններից պաշտպանել «հասարակ ժողովրդին»: Այդ մշակույթի պահպանումն այսօր պարարտ հող է ստեղծում նաև պոպուլիզմի համար, որը, ինչպես հայտնի է, մեծ վերապահումներ ունի ներկայացուցչական ժողովրդավարության հարցում: Պոպուլիստը թերահավատորեն է մոտենում անգամ ընտրությունների միջոցով ձևավորված էլիտաներին և հանդուրժում է դրանց՝ պայմանով, որ «իսկական ժողովրդին ներկայացնում են նրա իսկական ներկայացուցիչները, որոնք ճիշտ դատողություններ և ճիշտ քայլեր են անում»[6]:

---

[4] Мирумян. 2004, 36.

[5] Земцов. 2020, 96–115.

[6] *Մյուլլեր. 2019:*

Բյուզանդական և Ռուսաստանյան կայսրություններում սերնդեսերունդ ապրած հայերը, ձևավորելով քաղաքական վարքի իրենց կարծրատիպերը, չէին կարող չազդվել «իշխանությունների սիմֆոնիայից», որի հիմնական հատկանիշներից մեկն է առաջին դեմքի սրբադասումը և սկզբունքորեն «մրցակցությունից դուրս» լինելը: Այդ պարագայում նաև XXI դարում ապրող քաղաքացիներն առաջին հերթին ապավինում են պետության ղեկավարի առաքինություններին, նրանի՛ց են պահանջում արդարություն և բարեկեցություն ու, մյուս կողմից, նրանի՛ց են դժգոհում, երբ այս կամ այն պահանջմունքը չի բավարարվում: Դրան զուգահեռ՝ պետական, քաղաքական այլ ինստիտուտների՝ խորհրդարանի, կուսակցությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, Հ/կ-ների նշանակությունը ստորադասվում է առաջին դեմքին: Տրամաբանական է, որ այդպիսի քաղաքական մշակույթի պարագայում մարդկանց ավելի սրտամոտ է պետության խիստ հիերարխիկ կառուցվածքը, որը, ի դեպ, հատուկ է նաև արևելյան միապետություններին՝ թագավոր–վեզիրներ–բյուրոկրատիա–հպատակներ: «Ուժեղ իշխանությունը, ինչպես և ցանկացած իշխանություն, հայկական հոգեկերտվածքում անձնավորված է, – գրում է սոցիոլոգ Գևորգ Պողոսյանը: – Այդ իսկ պատճառով ուժեղ իշխանությունն ընկալվում է որպես ուժեղ անձնավորության, նախագահի, թագավորի, այլ ոչ թե՝ անդեմ խորհրդարանի իշխանություն»[7]:

Այստեղ տեղին է հիշել գերմանացի ընկերաբան Մաքս Վեբերի՝ իշխանության երեք ձևերի բաժանումը (ընդգծենք, որ գիտնականն օգտագործում է “Herrschaft” *բառը, որը կարելի է տարածել ոչ միայն պետության կազմակերպման, այլև ամբողջ քաղաքական մշակույթի վրա). 1) ռացիոնալ, որը հիմնված է կարգուկանոնի «արձանագրված և ձևական ակտերի» հանդեպ հավատի վրա, 2) ավանդական, որի հիմքն է «հեղինակության ավանդույթի» լեգիտիմության հանդեպ հավատը, 3) խարիզմատիկ իշխանությունը, երբ մարդիկ համոզված են որևէ անձի «սրբության և հերոսական հզորության մեջ»: Դրա հիման վրա Վեբերն առանձնացնում է ավանդական իշխանության պարագայում վարչական հարաբերությունների երկու տեսակ՝ նահապետական (օրինակ՝ սուլթանական Թուրքիան) և դասային (Արևմտյան Եվրոպայում): Առաջին դեպքում ղեկավարի վարչակազմը (Վեբերի եզրաբանությամբ՝ «շտաբը») կազմում են տիրոջ ծառաները, «շտաբը» կշիռ չունի հասարակության մեջ, զուրկ է խնդիրները լուծելու սեփական միջոցներից, նախաձեռնողականություն չի դրսևորում և այլն[8]: Ակնհայտ է՝ դիտարկվող երեք կայսրություններում՝ Օսմանյան կայսրությունում, Պարսկաստանում, Ռուսական կայսրությունում և Խորհրդային Միությունում, իշխանության երկրորդ ու երրորդ ձևերի զուգորդումն էր, որն իր անմիջական ազդեցությունն էր թողնում վարչական և, ընդհանրապես, քաղաքական մշակույթի վրա:*

Հայաստանի Երրորդ Հանրապետությունում «փորձարկվել են» կառավարման երեք ձևերը՝ նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական: Անկախ նրանից, թե ինչպես է կոչվում առաջին դեմքի պաշտոնը և ինչ լիազորություններով է նրան օժտում Սահմանադրությունը, գործնական քաղաքականության մեջ ողջ իշխանությունը կենտրոնանում է մեկ անձի ձեռքում. խորհրդարանը չի հակակշռում գործադիր իշխանությանը, իսկ իշ-

[7] *Պողոսյան. 2006, 293:*

[8] Вебер. 2016, 254–255.

խող կուսակցության մեջ է ներառվում «նոմենկլատուրայի» գերիշխող մասը: Քաղաքական գործիչների և մասնագետների մի մասը հակված է դրա մեջ տեսնել բուն սահմանադրություններում կարգավորումների արատները: Չմերժելով այդ մոտեցումը՝ գուցե արժե ուշադրություն դարձնել նաև «հասարակական պատվերի» վրա, որը բխում է սահմանադրականության մասին պատկերացումների, իրավագիտակցության վրա: Իհարկե, կարևոր է, թե ով և ինչի համար է անցկացնում բարեփոխումները (օրինակ՝ Սահմանադրության), բայց նույնքան կարևոր է՝ արդյո՞ք այդ բարեփոխումները ներդաշնակ են քաղաքացիների մեծամասնության տրամադրություններին, արդյո՞ք Սահմանադրությունն, ու, ընդհանրապես, այն, ինչ գրված է թղթի վրա («արձանագրված և ձևական ակտերը» ըստ Վեբերի), հետաքրքրում է քաղաքացիներին:

Իրավագիտակցություն, սահմանադրականություն

Երբ կան բացահայտ հակասություններ՝ լինի դա գահակալության համար կռիվ, նախարարական տոհմերի միջև պայքար, թագավորի և ազնվականների բախում, թե մաֆիոզ կլանների «հարաբերությունների պարզում», դրանց հանգուցալուծումը կարող է կատարվել երկու ճանապարհով՝ կա՛մ բռնությամբ, արյամբ, պատերազմով, կա՛մ էլ՝ ինչ-որ պայմանավորվածություններով: Եթե ուժերն անհավասար են, ապա ավելի հավանական է առաջին ճանապարհը՝ մեկը մյուսին ճնշում է, թալանում, ստրկացնում, և այդ կարգավիճակը պահպանվում է այնքան ժամանակ, մինչև որ կեղեքվածը չի ուժեղանում կամ ավելի ուժեղը կարողանում է կեղեքել կեղեքողին:

Միջնադարում գերիշխում էր հարաբերությունների այդ տարբերակը, բայց արդեն այն ժամանակ արվում էին պայմանավորվելու և պայմանավորվածությունները թղթին հանձնելու փորձեր: Այդ առումով հայկական մտավորական (հոգևոր և ազնվական) վերնախավը տարբեր ժամանակահատվածներում իր աշխատություններով լրջորեն հարստացրել է իրավական և քաղաքական միտքը: Հատկանշական է, որ դեռևս միջնադարից հայ ազգային եկեղեցին առաջնորդվել է իր մշակած սահմանադրություններով (կանոնադրություններ)[9]:

Տպավորիչ են միջնադարում հայ մտածողների փորձերը՝ ինստիտուցիոնալ, իրավական-քաղաքական ձև տալ քրիստոնեական արժեքներին: «Քրիստոս այսպես կամեցավ, որպեսզի չլինի թե պարտադրված՝ միմյանց հանդեպ իրավունքներ կարգենք դատարանի գրով, այլ՝ կամենանք սիրով վարվել և վշտակցությամբ»[10], – XII դ. վերջում գրում էր Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքում»: Այդ նշանավոր ստեղծագործության մեջ տեղ գտած նորմերն իրենց ազդեցությունն էին թողել հայկական իրականությունից դուրս, բայց նաև՝ Կիլիկյան թագավորության պետականաշինության վրա: XIII դ. կեսերին Սմբատ Գունդստաբլը թարգմանում է Անտիոքի Ասիզները՝ փորձելով դրանք համատեղել Գոշի սկզբունքների հետ, սակայն այդ հարցում հաջողության չի հասնում: «Մի ողջ հարյուրամյակ, ո՛չ թագավորը, ո՛չ էլ բարոնները վերջին հաշվով չկարողացան թագի հարցում կշեռքի նժարը թեքել իրենց կողմը,

---

[9] *Այդ մասին տե՛ս Հարությունյան. 2016, 70–83:*

[10] *Մխիթար Գոշ. 2008, 19:*

խնդրի լուծումը կախված էր իշխանների բարի կամքից»[11]*: Վերջապես, 1265 թ. գրվում է Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը», որը Կիլիկյան թագավորության գոյության ողջ ընթացքում «ունեցել է նաև կարևոր քաղաքական նշանակություն, հաճախ պայմանավորելով պետական այրերի վարքագիծը, իսկ երբեմն նույնիսկ իրադարձությունների զարգացման ընթացքը»*[12]*: Զնայած մեզ հետաքրքրող հարցում Սմբատ Սպարապետը կենտրոնանում է «գահաժառանգության» խնդրի վրա, այս երկում, այսպես թե այնպես, շոշափվում են նաև բարոնների իրավունքները, իսկ «թագավոր–բարոններ» հարաբերությունները եվրոպական իրավաքաղաքական մտքի ուշադրության կենտրոնում էին:*

Պատմական այդ փուլում Կիլիկյան Հայաստանի և Եվրոպայի՝ քաղաքական մշակույթ ձևավորող գործընթացների միջև կարելի է «սինքրոնություն» նկատել: Նույն XIII դարում՝ 1215 թ., Անգլիայում ընդունվել է «Ազատությունների մեծ խարտիան» (Magnus carta libertum)*: Դա, ըստ էության, համաձայնագիր է, որը կնքվել էր թագավոր Հովհան Առաջին Անհողի ու բարոնների միջև և ապահովում էր վերջիններիս իրավունքները՝ որոշ չափով սահմանափակելով միապետի լիազորությունները: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, Ֆրանսիայում առաջին Սահմանադրությունն ընդունվել է 1791 թվականին՝ բացարձակ միապետությունն այդ երկրում սահմանափակվել էր պատմականորեն ավելի ուշ, քան Անգլիայում: Բայց ակնհայտ է, որ անգամ ֆրանսիական բացարձակ միապետության պայմաններում քաղաքական ու վարչական մշակույթը տարբերվում էր Բյուզանդիայից և Օսմանյան կայսրությունից, մասնավորապես, այն գործոններով, որը նշում է Մաքս Վեբերը:*

Սկսած XIII–XIV դդ.՝ հայերի «սինքրոնացումը» արևմտաեվրոպական քաղաքական մշակույթի հետ վերանում է: Ապրելով Ռուսական, Օսմանյան կայսրություններում և Պարսկաստանում՝ մեր ժողովրդի մեծամասնությունը չէր կարող անցնել իրավագիտակցության այն ճանապարհը, որը, օրինակ, XIII–XVII դդ. անցել է Անգլիան: Համեմատաբար փոքրաթիվ հայկական գաղութներն այլ երկրներում ձևավորում էին համապատասխան քաղաքական մշակույթ: Հայ իրավաքաղաքական մտքի ևս մի նշանավոր կոթող («Որոգայթ փառաց»-ը) ստեղծվել է Բրիտանիայի գաղութ Հնդկաստանում, որտեղ կար հայկական բուրժուազիա և մտավորականություն, հետևաբար, այնպիսի քաղաքական մշակույթ, որը հնարավորություններ էր տալիս մտածել հայկական պետական նախագծերի մասին: Բայց «Որոգայթ փառաց»-ն ուղղված էր ապագա հայկական պետությանը, որը պետք է ստեղծվեր օտար լծից ազատագրվելուց հետո, և Մադրասի խմբակի երազանքն իրականություն դարձավ այդ աշխատությունը լույս ընծայելուց միայն 130 տարի անց՝ 1918-ին:

Հիշյալ կայսրություններում, որոնցում բնակվում էր հայության մեծ մասը, սահմանադրաստեղծ աշխատանքն ընթանում էր այլ ուղղությամբ և արագությամբ: Ռուսաստանը, որպես կայսրություն, ձևավորվել է 300 տարի առաջ, և գրեթե բոլոր կայսրերը՝ Պետրոս Առաջինից սկսած, ձգտում էին ի մի բերել բազմապիսի օրենքները մեկ ընդհանրական փաստաթղթի մեջ, սակայն

[11] Տեր-Պետրոսյան. 2007, 38:
[12] Տեր-Պետրոսյան. 2007, 45:

օրինաստեղծ աշխատանքով զբաղվող հանձնաժողովների ոչ արդյունավետ աշխատանքը, ինչպես նաև բանակի միջամտությունը խոչընդոտում էր այդ գործընթացին: Եկատերինա Երկրորդը ֆրանսիական լուսավորական գաղափարների ազդեցության տակ ուներ Սահմանադրություն ստեղծելու մտադրություններ, բայց նույն Ֆրանսիայում բռնկված հեղափոխությունը հետ պահեց ռուսաստանյան վերնախավին այդ գաղափարից: XIX դարում նույնպես թե՛ իրենք՝ կայսրերը, և թե՛ ազնվականության մի մասը վարանոտ փորձեր էին անում սահմանադրական միապետություն ստեղծելու ուղղությամբ, սակայն այդ փորձերը հանդիպում էին պահպանողականների դիմադրությանը և տապալվում էին:

Առավել դրամատիկ վախճան ունեցան Ալեքսանդր Երկրորդի փորձերը (թագավորել է 1855–1881 թվականներին): Նրա իշխանության վերջին ամիսներին Ներքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցնում էր հայազգի կոմս, գեներալ Միխայիլ Լորիս-Մելիքովը, որի ղեկավարությամբ ստեղծվել էր Սահմանադրության նախագիծը: 1881 թ. մարտի 1-ին ցարը հայտնեց Լորիս-Մելիքովին, որ նախագիծը 4 օրից քննարկվելու է նախարարների խորհրդում, սակայն նույն օրը կայսրին սպանեցին ծայրահեղ արմատական հայացքներ ունեցող ահաբեկիչները: Հաջորդ կայսրը՝ Ալեքսանդր Երրորդը, խիստ բացասաբար էր տրամադրված բարեփոխումների նկատմամբ: Եվ միայն 1905 թ. հոկտեմբերին հեղափոխական իրադարձությունների ազդեցության տակ կայսր Նիկոլայ Երկրորդը հրապարակեց մանիֆեստ, որով սահմանվում էր, մասնավորապես, խորհրդարանի՝ Դումայի ստեղծումը: Ու, չնայած այդ դեպքում էլ բարեփոխումների ընթացքը շատ արագ կասեցվեց, հենց 1905 թ. մանիֆեստն էլ համարվում է ռուսաստանյան առաջին Սահմանադրությունը: Ռուսաստանցի պատմաբան և փիլիսոփա Անդրեյ Մեդուշևսկին սահմանադրաստեղծ աշխատանքի ամբողջ գործընթացը բաժանում է երեք պայմանական փուլի՝ XVIII դարում արիստոկրատիայի կողմից միապետական իշխանության սահմանափակման փորձերը, XIX դարում պետական իշխանության կողմից քաղաքական ռեժիմը «վերևից» արդիականացնելու նախաձեռնությունները և XX դարասկզբի սահմանադրական ռեֆորմը[13]*:*

Նույն հեղինակը մեկ այլ աշխատության մեջ նշում է, որ «սահմանադրական ճգնաժամերի սպառնալիքը ... ռուսաստանյան հասարակության համար մնում է որպես մշտական գործոն՝ պարբերաբար գործի դնելով ավտորիտար փուլով հերթական ցիկլի ավարտի մեխանիզմը»[14]*: Այդ օրինաչափությունը, հավանաբար, հատուկ է ոչ միայն Ռուսաստանին: Այստեղ հպանցիկ հիշեցնենք, որ Օսմանյան կայսրությունում առաջին սահմանադրությունն ընդունվել է 1876 թ., հայերի գործուն մասնակցությամբ, իսկ մինչ այդ՝ 1860 թ. (1863 թ.) Հայ համայնքի համար ստեղծված Ազգային սահմանադրությամբ: Սակայն, ընդամենը երկու տարի անց Աբդուլ Համիդ Երկրորդը կասեցրեց օսմանյան սահմանադրության գործողությունը, իսկ Պարսկաստանում առաջին սահմանադրությունն ընդունվել է 1906 թվականին:*

---

[13] Медушевский. 1997.

[14] Медушевский. 2015, 290.

Այսպիսով, հայերը մի քանի դար ապրել են կայսրություններում, որտեղ պետության առաջին դեմքի իշխանությունը որևէ ձևով սահմանափակված չէր: XIX դարի երկրորդ կեսին, նաև՝ Արևմուտքի ազդեցության կամ երբեմն ճնշման տակ այդ կայսրություններում որոշակի փորձեր էին արվում ներմուծել «խաղի նոր կանոններ», սակայն արդիականացման կամ, պայմանականորեն ասած, արևմտականացման (վեստերնիզացիայի) այդ փորձերը հիմնականում անհաջողության էին մատնվում, և որոշակի փոփոխություններ տեղի ունեցան միայն XX դարում՝ այդ երեք պետություններում տեղի ունեցող հեղափոխական իրադարձությունների ազդեցության տակ: Նախորդ դարում Խորհրդային Միությունում թեև ձևական առումով գոյություն ուներ օրենսդիր իշխանություն և գործում էր Սահմանադրություն, բայց նման ինստիտուտներն էական ազդեցություն չէին թողնում քաղաքական մշակույթի վրա, որում իրական արժեքներն ու վարքային կողմնորոշումները հեռու էին «պաշտոնական», թղթի վրա գոյություն ունեցող, «արձանագրված և ձևական ակտերով» ամրագրված կարգավորումներից: Այդ երկակի մտածողությունը՝ մի կողմից «պաշտոնական», մյուս կողմից՝ իրական հարաբերություններին առնչվող, ժառանգել են գործնականում բոլոր հետխորհրդային երկրները, այդ թվում՝ Հայաստանի Երրորդ Հանրապետությունը:

Դարերով ձևավորված մշակույթը չէր կարող արմատական վերափոխում ապրել 30 տարում՝ Երրորդ Հանրապետության պայմաններում: Վերաբերմունքը ձևականորեն ամրագրված «խաղի կանոնների», օրինականության, սահմանադրականության հանդեպ իր արտացոլումն է գտնում սոցիոլոգիական հարցումներում: Իրավագիտակցությանը, սահմանադրականությանը վերաբերող պատկերացումների իմաստով հետաքրքիր է «Գելափ ինթերնեյշնլ» սոցիոլոգիական ծառայության կողմից կազմակերպած հասարակական կարծիքի հարցումը, որն անցկացվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական հանրաքվեի նախօրեին՝ նույն թվականի նոյեմբերին: Ըստ այդմ, հարցին՝ «արդյոք ձեզ հայտնի՞ է, թե կառավարման ինչ ձև է առկա հանրապետությունում», բացասաբար է պատասխանել հարցվածների 30.2 %-ը: 28.1 %-ը ծանոթ չէին գործող Սահմանադրությանը, իսկ 37 % պատասխանել, որ ավելի շուտ ծանոթ չէ: Ընդ որում, 80.6 % ծանոթ չէր սահմանադրական փոփոխությունների նախագծին:

Պառլամենտարիզմի ինստիտուտի նկատմամբ ժամանակից Հայաստանում վստահության մակարդակը նույնպես ցածր է: Նույն հարցման համաձայն՝ խորհրդարանի վարկանիշը (18.6 %) ավելի ցածր էր, քան նախագահինը (25.6 %) և կառավարությանը (20.9 %)[15]: Նույն տվյալներն է արձանագրում նաև 2021 թ. Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) հարցումը: Այստեղ Ազգային ժողովի վարկանիշն ամենացածրն է՝ դրա աշխատանքից դժգոհ է 67 %-ը, ծայրահեղ դժգոհ՝ 50 %-ը[16]: Արժե հիշատակել, որ այս վեր-

[15] *Սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ հասարակության կարծիքի ուսումնասիրություն.*–file:///C:/Users/A/Desktop/Detailed_Sahmanadra kan -1st-wave_2015%20(1).pdf.

[16] *Հայաստանում առաջին հերթին մտահոգված են տարածքային և սահմանային խնդիրներով.* IRI *հարցում.* – https://www.amerikayidzayn.com/a/6424492.html.

ջին հարցումն անցկացվել է խորհրդարանական կառավարման պայմաններում: Վերջապես, 2020 թ. գարնանը հրապարակված ԵՄ «Արևելյան հարևանության» զեկույցի համաձայն, անհատական մակարդակով հայաստանցիներն ամենաբարձրն են գնահատում խաղաղությունը, անվտանգությունը և կայունությունը՝ 61 %, այնուհետև տնտեսական բարգավաճումը՝ 39 %: Մեզ հետաքրքրող արժեքներից մարդու իրավունքները ստացել են 32 %, օրենքի իշխանությունը՝ 23 %, անհատական ազատությունը՝ 18 %, ժողովրդավարությունը՝ 11 %, մամուլի ազատությունը՝ 2 %[17]:

Ստորև հակիրճ թվարկենք ևս երկու պատմական գործոն, որոնք, մեր կարծիքով, ազդել են ժամանակակից Հայաստանի քաղաքական մշակույթի վրա:

Մտավորականների, սեփականատերերի խավ

Քաղաքական մշակույթի առումով, կարծում ենք, կարևոր նշանակություն ունի ազնվականության (մտավորականության) առկայության կամ բացակայության հանգամանքը: Եթե դիտարկենք այդ չափանիշը, ապա այն տարածքը, որտեղ 1918 թ. սկսած իրականացվում են հայկական պետության նախագծերը, մինչ այդ խիստ անբարենպաստ վիճակում էր գտնվում. տվյալ կարևոր շերտը երկար ժամանակ՝ այդ թվում ողջ XIX դարի ընթացքում, գրեթե բացակայում էր՝ Խաչատուր Աբովյանի նման նվիրյալների գործունեությունն այս՝ մեր այսօրվա կենսական տարածքում ավելի շուտ բացառություն է, որն օրինաչափություն է հաստատում:

Այդ առումով Վրաստանում իրավիճակն ավելի բարվոք էր: 1783 թ. կնքված Գեորգիևյան դաշնագրով, որով ճանաչվում էր Ռուսաստանի հովանավորությունն Արևելյան Վրաստանի նկատմամբ, ռուս և վրացի ազնվականները, հոգևորականներն ու առևտրականները հավասարվել էին իրենց իրավունքներում[18]: Շեշտենք, որ 1828 թ. հետո Ռուսաստանն ազնվականի կոչում էր տվել մի շարք հայերի, մասնավորապես՝ նրանց, ովքեր արմատներ ունեին Լոռիում և Ղարաբաղում: Լորիս-Մելիքովի նման գործիչների օրինակը ցույց է տալիս, որ XIX դարում, այսինքն՝ ոչ հեռավոր անցյալում, հայազգի ազնվականները, ինչպես նաև հայազգի գործարարները, սովորաբար բավական թույլ կապեր ունեին բուն հայկական իրականության, առավել ևս՝ հայկական (թեկուզ ոչ անկախ) պետության նախագծերի հետ: Վրացական ազնվականությունը (և, հետևաբար, մտավորականությունը) ավելի բարենպաստ հնարավորություններ ուներ[19]: XIX դ., ինչպես և նախորդ դարերում տարբեր կայսրություններում ու այլ պետություններում ապրել են հայ անհատներ, որոնք նշանակալի հաջողությունների են հասել պետական աստիճանակարգում, բիզնեսում, արվեստում: Բայց խոսքն այստեղ ոչ թե հզոր անհատների, այլ ինստիտուտների, մշակույթ ստեղծող գործոնների մասին է, և, հատկապես, այն գործոնների, որոնք նշանակություն ունեին XX դարում հայկական պետությունների համար: Միայն Երկրորդ Հանրապետությունում՝ Խորհրդային Հայաստանում, արդեն այսօրվա մեր կենսական տարածքում ձևավորվել էր հայ

---

[17] EU neighburs east. Annual survey report: 5th Wave (Spring 2020). – file:///C:/Users/A/Desktop/euneighbours_east_as2020report_armenia%20(2).pdf.

[18] Пайчадзе. 1983, 142.

[19] Любимов. 2004.

մտավորականության նոր խավը, բայց մի բան է տվյալ տարածքում ունենալ մտավորականության շերտ, որն ունի մի քանի տասնամյակի, 2–3 սերունդների պատմություն, մեկ այլ բան, երբ այդ պատմությունն առնվազն 150 տարվա «խորություն» ունի:

Արևելյան Հայաստանում երկար ժամանակ չէր ձևավորվում խոշոր սեփականատերերի խավը՝ հայ գործարարների համար XIX դարում շատ ավելի մեծ հեռանկարներ էին բացում Թիֆլիսը և Բաքուն, մյուս կողմից, ինչպես նշեցինք, դանդաղ էր ձևավորվում աշխարհիկ մտավորականությունը, որը պետք է առաջնար առաջին հերթին ազնվականությունից ու բուրժուազիայից: Առաջին հերթին մտավորական խավի միջոցով են, մեր կարծիքով, ձևավորվում ժամանակակից քաղաքական մշակույթի ինստիտուտները (այդ թվում՝ քաղաքացիական հասարակությունը), որոնք ոչ միայն պարզ միջնորդ են քաղաքացիների ու իշխանության միջև, այլև անմիջականորեն ազդում են թե՛ առաջինների և թե՛ երկրորդի իրավաքաղաքական պատկերացումների վրա: Հակառակ պարագայում շատ բնական է առաջին դեմքի և քաղաքացիների անմիջական, չմիջնորդավորված շփումը, «հակաէլիտար» տրամադրությունները, որոնց մասին նշվեց վերևում: Ժամանակակից Հայաստանում գործում է այն մոդելը, որում, ըստ փիլիսոփա Աշոտ Ոսկանյանի, «ժողովրդական զանգվածներին և նրանց խղճերին (համա)պատասխանող առաջնորդի հաղորդակցումն իրականացվում է անմիջականորեն, հուզական մակարդակով՝ շրջանցելով հասարակական ինստիտուտները և հնից մնացած «էլիտաներին»[20]:

Քաղաքական ուժերի ծրագրերը

XIX դ. 80–90-ական թվականներին ձևավորված հայկական կուսակցություններն իրենց ծրագրերում շեշտը դնում էին Արևմտյան Հայաստանի ազատագրման, ոչ թե Արևելյան Հայաստանում պետականություն կառուցելու վրա: Բերենք մի քանի օրինակ: Արմենականներ. «... յեղափոխութեամբ Թուրքիայի հայ ժողովրդեան համար իրաւունք ձեռք բերել ինքզինք ազատորէն կառավարելու»[21]: Հնչակյաններ. «Արևմտահայաստանի և Կիլիկիոյ մէջ յեղափոխական գործունեութեամբ ապահովել Պերլինի դաշնագրով խոստացուած բարենորոգմանց գործադրութիւնը, արևմտահայության ազատագրության պայքարի դրոշի ներքո»[22]: ՀՅԴ. «Ապստամբութեան միջոցով Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական և տնտեսական ազատութիւն»[23]: Որոշակի բացառություն պետք է անել հնչակյանների համար. 1888 թ. «Հնչակ» թերթի հոկտեմբեր–նոյեմբերի համարում հրապարակած ծրագրում այդ կուսակցությունն Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրը լուծելուց հետո նախատեսում էր «ազատագրել նաև պարսկահայերին և ռուսահայերին և հայության այդ երեք հատվածների միավորումից կազմել դեմոկրատական հանրապետություն»[24]: Այնուամենայնիվ, այստեղ դա դիտվում էր որպես ապագայում ցանկալի մի հեռանկար, և այդ նպատակին հասնելու միջոցները

[20] *Ոսկանյան. 2021, 63:*
[21] *Հայոց պատմություն. 2010, 485:*
[22] *Հայոց պատմություն. 2010, 495:*
[23] *Հայոց պատմություն. 2010, 504:*
[24] *Հայոց պատմություն. 2010, 493:*

մանրամասնորեն չէին մշակվում: Միանգամայն հասկանալի պատճառներով քաղաքական միտքն ուղղված էր հայ ժողովրդի ֆիզիկական գոյատևմանը, ոչ թե պետական նախագծեր իրականացնելուն: Հասարակական ձգտումներն ու քաղաքական մտքի ուղղվածությունն ունեն որոշակի իներցիոն ուժ, որը պահպանվել էր մինչև 1988 թ. և անգամ դրանից հետո:

Արժեքային կողմնորոշումները հաշվի առնելով՝ 1981 թ. սկսած ամերիկացի հետազոտող Ռոնալդ Ինգլհարթի, իսկ այնուհետև՝ նրա աշակերտների կողմից անցկացվում են հսկայածավալ հետազոտություններ, որոնք նվիրված են տարբեր ազգերի մեջ արժեքների ընկալման դասակարգմանը: Առանցքներից մեկը գոյատևման և ինքնիրացման արժեքների հակադրությունն է (Survival vs. Self-expression)*, ըստ որի, ազգերն իրենց տեղն են զբաղեցնում, այսպես կոչված, Ինգլհարթի քարտեզում*[25]*: Մեր պարագայում իրենց դերն են խաղում թե՛ ավանդույթի ուժը և թե՛ կոնկրետ իրավիճակներում առաջացող խնդիրները. Առաջին և Երրորդ Հանրապետություններում, անընդհատ բախվելով գոյատևման մարտահրավերներին, քաղաքական մշակույթը շարունակում էր ձևավորվել գոյատևման արժեքների գերակայությամբ: «Հերոսական անձերի» ու «նվիրյալ առաջնորդների» պահանջարկն այդ պայմաններում շատ ավելի մեծ է, քան պետական և քաղաքական ինստիտուտների որակյալ աշխատանքի ակնկալիքը:*

Սրանք գործոններ են, որոնք ազդել են XX–XXI դդ. հայկական պետությունների քաղաքական մշակույթի վրա: Իհարկե, կան նաև բազմաթիվ այլ գործոններ, որոնք ի հայտ են եկել հատկապես 1991 թ. հետո: Դրանց քննարկումն այս հոդվածի նպատակների շրջանակներից դուրս է: Գնահատել այդ «հին» և «նոր» գործոնները՝ որպես «դրական» կամ «բացասական», կհակասեր զուտ գիտական ուսումնասիրության սկզբունքներին: Պարզապես քաղաքական և հասարակական շրջանակները պետք է հաշվի առնեն դրանց առկայությունը՝ իրենց գործունեությունը կազմակերպելիս:

Եզրակացություն

– Հայերը վերջին մի քանի դարերի ընթացքում ապրել են Օսմանյան, Ռուսական կայսրության, ինչպես նաև՝ Պարսկականի քաղաքական մշակույթի պայմաններում:

– Ռուսաստանն իր հերթին ազդվել էր Բյուզանդական քաղաքական մշակույթից, որի առանցքում է «իշխանության սիմֆոնիան»՝ կայսեր հոգևոր ու աշխարհիկ իշխանության միատեղման տեսքով:

– Վերոհիշյալ պետությունների քաղաքական մշակույթում առանցքային դեր էր խաղում միապետի կամքը, նրա անմիջական շփումը և վերաբերմունքը հպատակների հանդեպ: Որևէ այլ պետական ինստիտուտի, վերնախավային խմբի կամ սոցիալական շերտի դերակատարությունը երկրորդական էր:

– Այդ մշակութային առանձնահատկություններով է պայմանավորված վերաբերմունքը օրենքներում ամրագրված լեգիտիմիզացիային:

– Այդ առանձնահատկություններից ածանցյալ էին այդ պետություններում օրինաստեղծ, սահմանադրաստեղծ գործընթացները:

---

[25] World Values Survey, wave 7, 2017–2020.– https://www.eurasian-research.org/publication/what-the-world-values-survey-results-say/.

– XII դ. վերջին Մխիթար Գոշի և 1265-ին Սմբատ Սպարապետի գրած «Դատաստանագրքերը» համաքայլ էին եվրոպական իրավաքաղաքական մտքին, իսկ այդ ոլորտի մեկ այլ նշանավոր գործը՝ «Որոգայթ փառացը» (1788) ստեղծվել էր մեծ ընդմիջումից հետո՝ Բրիտանիայի գաղութ Հնդկաստանում:

– Առաջին Սահմանադրությունները Օսմանյան կայսրությունում, Ռուսական կայսրությունում և Պարսկաստանում ընդունվել են համապատասխանաբար 1876, 1905 և 1906 թվականներին, այսինքն՝ պատմականորեն ուշ ժամանակաշրջաններում և, բացի դրանից, կարճատև կյանք են ունեցել: Դրանք չէին կարող կայուն ավանդույթ ստեղծել հիշյալ պետություններում ապրող ժողովուրդների (այդ թվում՝ հայերի) սոցիալական վարքում:

– Այն կենսական տարածքում, որտեղ 1918 թ. սկսած իրականացվում են հայկական պետության նախագծերը, XIX դարում, ըստ էության, բացակայում էր բուրժուազիան և մտավորականությունը:

– Այս բոլոր գործոնները ձևավորել են Առաջին, Երկրորդ և Երրորդ Հանրապետությունների քաղաքական մշակույթը, սահմանադրականության և հասարակական ինստիտուտների դերը ստորադասված է քաղաքացի (հպատակ) – իշխանավոր (առաջին դեմք) չմիջնորդավորված հարաբերություններին:

Արամ Աբրահամյան – պրվ. թ., «Առավոտ» թերթի գլխավոր խմբագիր: Հատուկ դասընթացներ է վարում Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի և Հայ-ռուսական համալսարանի մագիստրատուրայում: Գիտական հետաքրքրությունները՝ մշակութաբանություն, քաղաքագիտություն, զանգվածային լրատվության միջոցների տեսություն: Հեղինակ է երաժշտագիտական մի շարք հոդվածների:
aramabr333@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում առաջին հերթին մտահոգված են տարածքային և սահմանային խնդիրներով. IRI հարցում. – https://www.amerikayidzayn.com/a/6424492.html.

Հայոց պատմություն. 2010, հ. 3, գիրք 1, Երևան, «Զանգակ – 97», 704 էջ:

Հարությունյան Գ. Գ. 2016, Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը եւ ժամանակի մարտահրավերները, Երևան, Նժար, 672 էջ:

Մխիթար Գոշ. 2008, Դատաստանագիրք, Երևան, «Իրավունք», 242 էջ:

Մյուլլեր Յան-Վերներ. 2019, Ինչ է պոպուլիզմը, Երեւան, Newmag, 200 էջ:

Ոսկանյան Ա. 2021, Հայոց համազգային շարժումը որպես հայկական լուսավորության քաղաքական փուլ. – Անկախությունը և ազատական բարեփոխումները, մաս 2, Երևան, «Անտարես», էջ 43–64:

Պողոսյան Գ. Ա. 2006, Արդի հայ հասարակություն, Երևան, «Լուսաբաց», 354 էջ:

Սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ հասարակության կարծիքի ուսումնասիրություն.– file:///C:/Users/A/Desktop/Detailed_Sahmanadrakan-1st-wave_ 2015%20(1).pdf.

Տեր-Պետրոսյան Լ. 2007, Խաչակիները և հայերը, հ. Բ, Երևան, Հայաստանի Հանրապետության առաջին նախագահի արխիվ, 672 էջ:

Вебер М. 2016, Хозяйство и общество: очерки понимающей социологии, в 4 т., т. 1. М., Издательский дом высшей школы экономики, 448 с.

Дугин А. Торжество Византии.–https://izborsk-club.ru/9908

Земцов А. О. 2020, Конец «сильной руки»? Критический дискурс-анализ нормативного взгляда в политической культуре россиян. – «Социологический журнал» (М.), т. 26, № 4, с. 96–115.

Любимов С. В. 2004, Титулованные роды Российской империи: опыт подробного перечисления всех титулованных российских дворянских фамилий, с указанием происхождения каждой фамилии, а также времени получения титула и утверждения в нем. М., «Фаир-Пресс», 296 с.

Медушевский А. Н. 1997, Демократия и авторитаризм: российский конституционализм в сравнительной перспективе. М., «РОССПЭН», 650 с.

Медушевский А. 2015, Политические сочинения: право и власть в условиях социальных трансформаций. М. – СПб, Изд-во гуманитарных инициатив, 512 с.

Мирумян К. 2004, История политической науки, ч. 2. Ереван, Изд-во РАУ, 448 с.

Пайчадзе Г. Г. 1983, Георгиевский трактат. Тбилиси, «Мецниереба», 247 с.

Политология. 2005. М., «Гардарики», 588 с.

Almond Gabriel, and Sidney Verba. The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. – Princeton University Press, 1963.

World Values Survey, wave 7, 2017-2020 // https://www.eurasian-research.org /publication/what-the-world-values-survey-results-say/

ЗАМЕТКИ ОБ ИСТОРИЧЕСКИХ КОРНЯХ ПОЛИТИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВА (XX– XXI в.)

АРАМ АБРАМЯН

Р е з ю м е

Ключевые слова: политическая культура, Византийская империя, Российская империя, политико-правовая мысль, легитимность, конституционность, правосознание, государственность, Третья Республика.

На протяжении многих веков армяне жили на территории различных империй. Исторически наиболее близкими являются периоды Российской и Османской империй, а также Персии. Политическая культура этих империй оказала заметное влияние на формирование культуры в армянском государстве, начиная с 1918 года. В этом вопросе важное значение имеет способ легитимизации первого лица государства, в частности, в Византийской, а затем в Российской империях. При этом способе легитимизации роль политических и общественных институтов – партий, парламента, местного самоуправления и т. д., отступает на второй план, уступая место «прямым отношениям» руководителя государства и граждан (подданных). В соответствии с этим формируется правосознание граждан, их определенное отношение к конституционализму и парламентаризму. С этой точки зрения важное значение имеет то обстоятельство, что на территории, где впоследствии начали осуществляться государственные проекты – в

Восточной Армении, в XIX веке практически отсутствовали буржуазия и интеллигенция.

Арам Абраамян – к. иск., главный редактор газеты «Аравот». Ведет специальные курсы в магистратуре АГПУ им. Х. Абовяна и Российско-Армянского университета. Научные интересы: культурология, политология, теория средств массовой информации. Автор ряда статей по музыкознанию. aramabr333@gmail.com

OBSERVATIONS ON THE HISTORICAL ROOTS OF THE POLITICAL CULTURE OF THE ARMENIAN STATE
(20th-21st centuries)

ARAM ABRAHAMYAN

S u m m a r y

Key words: political culture, Byzantine Empire, Russian Empire, political and legal thought, legitimacy, constitutionality, legal awareness, statehood, Third Republic.

For many centuries, Armenians lived on the territory of various empires. Historically, the closest are the periods of the Russian and Ottoman empires, as well as the Persian Empire. The political cultures of these empires had noticeable impact on the formation of culture in the Armenian state, starting from 1918. In this matter, the way of legitimizing the first person of the state is of great importance, in particular, in the Byzantine Empire, and then in the Russian empire. With this method of legitimization, the role of political and public institutions – parties, parliament, local self-government, etc., recedes into the background, giving way to “direct relations” between the head of state and citizens (subjects). In accordance with this, the legal consciousness of citizens is formed, their certain attitude towards constitutionalism and parliamentarism. From this point of view, it is important that in the territory where later state projects began to be implemented – in Eastern Armenia in the 19th century there were practically no bourgeoisie and intelligentsia.

Aram Abrahamyan– Candidate of Sciences in Arts, Editor of “Aravot” newspaper. He offers special courses in the master’s programs of the ASPU after Kh. Abovyan and the Armenian-Russian University. Scientific interests: culturology, political science, media theory. Author of a number of musicological articles.
aramabr333@gmail.com